

**ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԿՅԱՆՔԻՆ ԿԱՍ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆԸ ՊԱՏՃԱՌՎԱԾ
ՎՆԱՍՆԵՐԻ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԵՎ
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

ՈՐՈՇՈՒՄ

«15» մայիս 2018թ. թիվ 11

ՀԱՏՈՒՑՄԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՎՃԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ Օրենք) 4-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի «գ» ենթակետը, 2-րդ մասի 1-ին կետը, 5-րդ հոդվածի 2-րդ մասը, Զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի 02.03.2017թ. թիվ 5 որոշմամբ հաստատված Ակտիվների և պարտավորությունների կառավարման հանձնաժողովի կազմման և գործունեության կարգի 10.3-րդ կետը, Զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի 02.03.2017թ. թիվ 9 որոշմամբ հաստատված Հատուցման գումարների վճարման կարգը, Ակտիվների և պարտավորությունների կառավարման հանձնաժողովի 15.05.2018թ. նիստի թիվ 5 արձանագրությունը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարությունից 14.05.2018թ. ստացված փաստաթղթերը և ԲՍՓՀ 10.04.2018թ. բժշկասոցիալական փորձաքննական թիվ 1273743 որոշումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Առաջին խմբի հաշմանդամ, շարքային Նարեկ Հայկի Հովեյանին վճարել Օրենքով սահմանված հատուցման գումարը՝ 58.000.000 ՀՀ դրամը, որից 10.000.000 ՀՀ դրամը միանվագ, իսկ մնացած գումարը՝ ամսական 200.000 ՀՀ դրամի չափով 20 տարվա ընթացքում,
2. Սահմանել, որ Նարեկ Հայկի Հովեյանին սույն որոշման 1-ին կետում նշված ամսական վճարումների կատարումը սկսել սույն թվականի ապրիլ ամսվանից և սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 3-օրյա ժամկետում վերջինիս փոխանցել սույն թվականի ամրիլ և մայիս ամիսների համար սահմանված վճարները՝ ընդհանուր 400.000 ՀՀ դրամ գումարի չափով:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Հանձնաժողովի նախագահ՝

Վարուժան Ավետիքյան